ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

05 նոյեմբերի 2020 թ., ԿԽ-008/20

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ՝ «ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ 2020-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 19.10.2020 Թ. ԿԽ-007/2/20 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և 8-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով՝ Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհուրդը

Որոշում է՝

1. Ուժը կորցրած ճանաչել Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց 2020-2021 թվականների մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրիրը հաստատելու մասին» 19.10.2020 թ. ԿԽ-007/2/20 որոշումը:

2. Հաստատել Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց 2020 թվականի երկրորդ խմբի մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագիրը՝ համաձայն հավելված 1-ի:

Խորհրդի նիստը նախագահող՝ ***Գ. Բաղդասարյան***

Խորհրդի անդամներ՝ ***Ա. Մարուխյան***

Ռ. Գրիգորյան

Հավելված 1
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 05.11.2020 թ.
ԿԽ-008/20 որոշման

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ուսուցման սույն ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է. «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 38.1-րդ հոդվածով սահմանված կարգով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների 2020թ. երկրորդ խմբի ցուցակում ընդգրկված անձանց (այսուհետ՝ Ունկնդիրներ) կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագրերը:

2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի կողմից՝ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի հիման վրա:

3. Ծրագիրը նպատակաուղղված է Ունկնդիրների մոտ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարցերով զբաղվող դատախազի պաշտոնում գործելու համար անհրաժեշտ կարողությունների, հմտությունների ձևավորմանը, մասնագիտական գիտելիքների ծավալի ընդլայնմանը:

3.1. Մասնագիտական պատրաստման գործընթացը վերաբերում է քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության տեսական և պրակտիկ հարցերին, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի կիրառման առանձնահատկություններին, ակտիվների վերականգնման միջազային փորձին և այդ ոլորտում համագործակցությանը: Ուսուցման գործընթացը նպատակաուղղված է ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ ուսումնասիրություն սկսելու հիմքերի և կարգի, գաղտնի տեղեկությունների մշակման, ապօրինի ակտիվների սառեցման ընթացակարգի, ուսումնասիրության արդյունքների ամփոփումների և եզրակացության կազմման, հաշտության համաձայնության, հաշվապահության հիմունքների, ինչպես նաև այս ոլորտում միջազգային իրավական ակտերի, միջազգային համագործակցության, ակտիվների վերականգնման միջազգային և ներպետական կառուցակարգերի, ակտիվների հետախուզման և ֆինանսական վերլուծությունների վերաբերյալ Ունկնդիրների գիտելիքների ընդլայնմանն ու գործնական հմտությունների ձևավորմանը:

4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով՝ լսարանային ուսուցման և փորձաշրջանի եղանակներով:

5. Ուսուցումն իրականացվում է դասախոսությունների, սեմինար և գործնական պարապմունքների, ինչպես նաև ունկնդիրների ինքնակրթությունը խրախուսող կրթական արդի եղանակների կիրառման միջոցով:

6. Փորձաշրջանը կազմակերպվում է անհատական ծրագրին համապատասխան, որում ընդգրկվում են փորձաշրջանի ընթացքում պարտադիր կատարման ենթակա առաջադրանքներ՝ ըստ Ծրագրով նախատեսված ուղղությունների: Փորձաշրջանի մեկ օրվա տևողությունը 10 ակադեմիական ժամ է: Փորձաշրջանի ընդհանուր ժամաքանակը սահմանվում է 40 ակադեմիական ժամ: Փորձաշրջանի ավարտին Ունկնդիրը գնահատվում է՝ դրական կամ բացասական:

7. Ուսումնառության ընդհանուր ժամաքանակը սահմանվում է 122 ակադեմիական ժամ:

8. Ուսումնառության տևողությունը սահմանվում է 3 (երեք) շաբաթ (2020 թվականի նոյեմբերի 9-ից 2020 թվականի նոյեմբերիի 30-ը)՝ ներառյալ 4 (չորս) օր տևողությամբ փորձաշրջանը (2021թ. նոյեմբերի 23-ից 26-ը):

II. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

	Դասընթացների ժամաքանակ	**Քննաշրջանի ժամաքանակ**	**Փորձաշրջանի ժամաքանակ**	**Ընդհանուր ժամաքանակ**
Ուսուցման 1-ին հատված (նոյեմբերի 9-20)	**80 ժամ** (դասընթաց) (նոյեմբերի 9-20)	**2 ժամ** (1 քննություն) (նոյեմբերի 27-30)	—	**82 ժամ**
Ուսուցման 2-րդ հատված (նոյեմբերի 23-26)	—	—	**40 ժամ** (նոյեմբերի23-26)	**40 ժամ**
ԸՆԴՀԱՆՈՒՐ	**80 ժամ**	**2 ժամ**	**40 ժամ**	**122 ժամ**

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

1. Ուսուցման 1-ին հատվածի դասընթացների մոդուլ

№	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	PC-C-022-20	Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության արդի հարցեր	40
2.	PC-S-050-20	«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի կիրառման առանձնահատկությունները, ակտիվների վերականգնման միջազային փորձը և այդ ոլորտում համագործակցությունը	40
ԸՆԴՀԱՆՈՒՐ			**80**

IV. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. PC-C-022-20. Քաղաքացիական իրավունքի և Քաղաքացիական դատավարության արդի հարցեր.

Դասընթացը պայմանավորված է օրենսդրական զարգացման արդյունքում քաղաքացիաիրավական ոլորտում ներդրված նոր ինստիտուտների, փոփոխության ենթարկված դրույթների, դրանց կիրառման վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ առկա մոտեցումների, քաղաքացիական իրավունքի այլ նորմերի կիրառման առանձնահատկությունների, դրա արդյունքում բացահայտված խնդրահարույց և վիճելի հարցերի վերաբերյալ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց տեսական ու պրակտիկ գիտելիքների ու հմտությունների փոխանցման, ինչպես նաև քաղաքացիական դատավարության կատարելագործման ուղղությամբ իրականացված բարեփոխումների, ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքում ներդրված ինստիտուտների ուսումնասիրության, դրանց վերաբերյալ տեսական ու գործնական գիտելիքների ու հմտությունների փոխանցման, ՄԻԵԴ, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումների ներկայացման, ինչպես նաև ստացած գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- քաղաքացիական իրավունքի սուբյեկտները և օբյեկտները,
- սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքներ, մասնավորապես՝
  - սեփականության իրավունքի ծագման, փոփոխման և դադարման առանձնահատկությունները,
  - ապահովված իրավունքը և այլն.
- գործարքները, մասնավորապես՝
  - գործարքի տեսակները, քաղաքացիաիրավական գործարքների վավերության պայմանները.
- պարտավորական իրավունքի արդի հարցերը, մասնավորապես՝
  - քաղաքացիաիրավական պատասխանատվության առանձնահատկությունները պարտավորական իրավունքի ինստիտուտում (տոկոսների հաշվարկման կարգի առանձնահատկությունները),
  - վնաս պատճառելու և անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորությունները,
  - ոչ նյութական վնասի հատուցման կարգը և պայմանները,
- միջազգային մասնավոր իրավունքի արդի հարցերը, մասնավորապես՝
  - կոլիզիոն նորմերի կիրառման առանձնահատկությունները,
  - պայմանագրային հարաբերությունների միջազգային մասնավոր-իրավական կարգավորման առանձնահատկությունները,
- արժեթղթերի իրավական կարգավորման առանձնահատկությունները,
- քաղաքացիական դատավարության սկզբունքները, փուլերը, կողմերը,
- հայցի հարուցումը և ապացույցի ապահովումը,
- քաղաքացիական գործը դատաքննության նախապատրաստելու արդի հացերը,
- ապացուցումը, ապացույցների գնահատման հմտությունները,
- դատաքննության հիմնահարցերը,
- հայցի ապահովման, հակընդդեմ ապահովման և նախնական ապահովման կիրառման առանձնահատկությունները,

- հատուկ հայցային վարույթի առանձնահատկությունները,
- հատուկ վարույթի գործերով քննության առանձնահատկությունները,
- պարզեցված ընթացակարգով գործերի քննության առանձնահատկությունները,
- օտարերկրյա դատական ակտերը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմում-ներով, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու և ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումներով, ինչպես նաև արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու, արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու, օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման, արբիտրաժին դատական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթների առանձնահատկությունները,
- վճռաբեկ և վերաքննիչ դատարաններում վարույթների առանձնահատկությունները,
- օտարերկրյա անձանց մասնակցությամբ գործերի վարույթի առանձնահատկությունները,
- քաղաքացիական գործերով իրավական օգնության առանձնահատկությունները,
- դատավարության նորմերի կիրառման հետ կապված այլ հիմնահարցեր,
- դատավարական փաստաթղթերի կազմման հմտություններ:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ PC-S-050-20 դասընթացի հետ համատեղ:

2. PC-S-050-20. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի կիրառման առանձնահատկությունները, ակտիվների վերականգնման միջազգային փորձը և այդ ոլորտում համագործակցությունը.

Դասընթացը պայմանավորված է ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ ուսումնասիրություն սկսելու հիմքերի և կարգի, գաղտնի տեղեկությունների մշակման, ապօրինի ակտիվների սառեցման ընթացակարգի, ուսումնասիրության արդյունքների ամփոփումների և եզրակացության կազմման, հաշտության համաձայնության, հաշվապահության հիմունքների վերաբերյալ տեսական ու գործնական գիտելիքների ու հմտությունների փոխանցման, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտում ակտիվների հետախուզման և ֆինանսական վերլուծությունների, ակտիվների վերականգնման միջազգային և ներպետական կառուցակարգերի, միջազգային համագործակցության վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է հետևյալ թեմաները.

- ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի առանձնահատկությունները,
- գույքի հետախուզում և ֆինանսական վերլուծություններ,
- էլեկտրոնային բազաներից օգտվելու հմտություններ,
- վարութային փաստաթղթեր կազմելու հմտություններ,
- ակտիվների վերականգմանն առնչվող միջազգային իրավական փաստաթղթերը,
- ակտիվների վերականգման ոլորտում միջազգային համագործակցության գործիքակազմը,
- ակտիվների վերականգման ներպետական մոդելներն ու փորձը:

Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ PC-C-022-20 դասընթացի հետ համատեղ: